ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԱԼՖՐԵԴ ՔՈՉԱՐՅԱՆԻ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՀԵՍՏՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԱՍՏՂԻԿ ՄԱՐԱԲՅԱՆԻ ՎՐԱՍՏԱՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Գործուղված անձինք

Ալֆրեդ Քոչարյան
Աստղիկ Մարաբյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ
ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Վրաստան, ք. Թբիլիսի, մարտի 23-25, 2023 թ.

4. Հրավիրող կողմը

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն Հովհաննես Թումանյանի մահվան 100-րդ տարելիցի միջոցառումներին:

6. Քննարկված թեմաները.

- *Հայկական մշակութային ժառանգության հանրահռչակում,*
- *Հայ-վրացական մշակութային համագործակցության ընդլայնում:*
- *Վրաստանում Հայաստանի մշակույթի օրերի կազմակերպում*

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

2023 թ. մարտի 23-25-ը Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում տեղի ունեցան ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի մահվան 100-րդ տարելիցի միջոցառումները, որոնք մեկնարկեցին Խոջիվանքի գերեզմանատանը հոգեհանգստի կարգի անցկացմամբ: Հաջորդիվ Գ. Լեոնիձեի անվան գրականության թանգարանում բացվեց «Թումանյանը և Թիֆլիսը» խորագիրը կրող ցուցահանդեսը, որին ներկա էր

Վրաստանի մշակույթի, սպորտի և երիտասարդության նախարարի տեղակալ Իրակլի Գիվիաշվիլին: Նա հանդես եկավ ողջույնի խոսքով՝ կարևորելով հայ-վրացական բարեկամական կապերը և հետագա զարգացման հեռանկարները:

Մարտի 24-ին Վ. Սարաջիշվիլու անվան պետական կոնսերվատորիայի դահլիճում տեղի ունեցավ հիշատակի համերգ. ելույթով հանդես եկավ «Գեղարդ» երգեցիկ խումբը՝ թումանյանական խոսքի ու կոմիտասյան երաժշտության համադրությամբ: Համերգին ներկա էին Վրաստանի խորհրդարանի առաջին փոխխոսնակ Գիա Վոլսկին և Վրաստանում հավատարմագրված երկրների դեսպաններ: Հիշատակի միջոցառումներն ամփոփվեցին «Հովհաննես Թումանյանի տուն» մշակութային կենտրոնում:

ԵԼՈՒՅԹՆԵՐ

23.03.2023

Նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանը Գ. Լեոնիձեի անվան գրականության թանգարանում կազմակերպված «Թումանյանը և Թիֆլիսը» խորագիրը կրող ցուցահանդեսի բացմանը հանդես եկավ ելույթով: Անդրադառնալով Հովհաննես Թումանյանի գրական ժառանգությանը և հայ-վրացական պատմական փոխառնչությունների համատեքստում նրա ունեցած բացառիկ դերակատարմանը՝ նախարարի տեղակալը կարևորեց երկու ժողովուրդների միջև բարեկամական կապերի և փոխահամագործակցությունը հետագա ընդլայնումը:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

23.03.2023

Աշխատանքային հանդիպում Վրաստանի մշակույթի, սպորտի և երիտասարդության նախարարի տեղակալ Իրակլի Գիվիաշվիլի հետ:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է արվել մշակույթի ոլորտում հայ-վրացական կապերի հետագա զարգացման հեռանկարներին, քննարկվել են Վրաստանում Հայաստանի մշակույթի օրերի անցկացման ժամկետները և ծրագրային հարցերը, ինչպես նաև միջազգային հարթակների և ծրագրերի շրջանակում համատեղ նախաձեռնություններով հանդես գալու հնարավորությունները:

24.03.2023

Աշխատանքային այց Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի

Այցի շրջանակում հանդիպում է կայացել Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի տնօրենության հետ, քննարկվել են թատրոնի վերաբացման ժամկետները և հետագա գործունեության ծրագրային հեռանկարները, այդ թվում Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի հետ համագործակցությամբ ցուցահանդեսի կազմակերպման հնարավորությունը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

- *Պայմանավորվածություն ձեռք բերվեց վրացական կողմի հետ համատեղ մշակել Վրաստանում Հայաստանի մշակույթի օրերի ծրագիրը, ինչպես նաև խորացնելու համագործակցությունը միջազգային ծրագրերի շրջանակում,*
- *Վրաստանում Հայաստանի դեսպանության հետ որոշվեց Վրաստան գործուղել մասնագետների խումբ՝ Խոջիվանքի գերեզմանատան բարեկարգման նպատակով:*

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

- *Ընդլայնել համագործակցությունը մշակութային ժառանգության պահպանության և հանրահռչակման ուղղությամբ,*
- *Ընթացք տալ Գ. Լեոնիձեի անվան գրականության թանգարանի և Հովհաննես Թումանյանի թանգարանի միջև համագործակցության հուշագրի ստորագրմանը,*
- *Առաջիկայում Վրաստան գործուղել մասնագետների խումբ՝ Խոջիվանքի գերեզմանատան բարեկարգման հարցերի կազմակերպման համար:*

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

Մարտի 28, 2023 թ.

Ալֆրեդ Քոչարյան

Աստղիկ Մարաբյան